ՀՈՒԼԻՍ, 2025

ԹԵՍՏ ՏԱՐՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ձեր առջև է քննական թեստի էլեկտրոնային բուկլետը:

Թեստը բաղկացած է երկու մասից՝ առարկայական գիտելիք և ակադեմիական ունակություններ:

Թեստի առավելագույն միավորն է 65:

Թեստում ներկայացված առաջադրանքները, ձևաչափի տեսանկյունից, տարբերվում են: Ուշադրությամբ կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգը, լավ ըմբռնե՛ք, թե ինչ է պահանջվում ձեզանից առաջադրանքը կատարելիս և այնուհետև ընտրեք կամ գրեք պատասխանը:

Ի նկատի ունեցեք՝

- Եթե ճիշտ պատասխանի հետ մեկտեղ նշեք նաև սխալ պատասխանը, միավոր չեք ստանա:
- Եթե հայոց լեզվի և գրականության առաջադրանքներին պատասխանելիս խախտեք ժամանակակից հայոց գրական լեզվի նորմերը, ապա ձեր միավորը կնվազի:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն:

Թեստի հաջորդ էջին անցնելու և ետ վերադառնալու համար կարող եք կիրառել ստեղնաշարի վրա եղած կոճակները

Առարկայական գիտելիք

Հայոց լեզու և գրականություն

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **1.** *Ստորև տրված բարդություններից ո՞րն է սխալ ձևով ներկայացված.*

ա) դափնեվարդ,

բ) լուսնեղջույր,

գ) կաթնահունց,

դ) ճրագալույց:

(1) **2.** ***Ո՞ր նախադասության մեջ է ստորադաս նախադասությունը ենթակա:***

ա) Աղջիկը շտապում էր դաշտ, որպեսզի ապուրի համար սունկ հավաքեր:

բ) Ես ներքուստ զգում էի, որ նա մի օր անպայման կհասկանար իր սխալը:

գ) Երբ քամին ցրում էր ամպերը, ձորերում հալվում էին ամպի ծվենները:

դ) Ծերունուն զարմացնում էր այն, որ գյուղ հասած որդին չայցելեց իրեն:

(1) **3.** ***Ո՞ր նախադասության մեջ է թվականը փոխանվանաբար կիրառվել:***

ա) Երկու հանճարեղ երգահանները ծանոթացել էին նախորդ դարի սկզբին:

բ) Երկուսի համար էլ Տերյանը բանաստեղծական արվեստի չափանիշ էր:

գ) Նրա առաջին բանաստեղծություններում զգալի է սիմվոլիզմի ազդեցությունը:

դ) Քսանական թվականների վերջին նա վերադառնում է Հայաստան:

(6) **4.** *Ստորև տրված նախադասությունների մեջ մի քանի ձևաբանական և շարահյուսական սխալ կա: Դո՛ւրս գրեք սխալները, բերե՛ք ճիշտ տարբերակները և բացատրե՛ք, թե ինչ պիտի իմանանք, որպեսզի նման սխալներ թույլ չտանք: Նկատի՛ ունեցեք, որ ճիշտ գրվածը սխալ տարբերակով փոխարինելու դեպքում Ձեր միավորները կնվազեն:*

Ներկայացված շնորհանդեսի հեղինակն Արամն էր: Նա մեծ խնամքով էր մոտեցել հանձնարարված առաջադրանքի նկատմամբ: Արամին՝ որպես լավագույն աշակերտ, ներկայացրին մրցանակի: Նա հուզվել էր, ուզում էր ինչ-որ բան ասեր, բայց չէր կարողանում: Արամի փոխարեն ոտքի կանգնեցին նրա թիմակից ընկերները և շնորհակալություն հայտնեցին բոլորից:

(2) **5.** *Գտե՛ք տրված նախադասության մեջ թույլ տրված սխալը, բերե՛ք ճիշտ տարբերակը և բացատրե՛ք, թե ինչ պիտի իմանա ուսուցիչը, որպեսզի նման սխալ թույլ չտա:*

Միջին և կրտսեր դասարանների մի քանի աշակերտներ մասնակցեցին լրացուցիչ դասընթացների, որոնք հաճախ էին բացակայել դասերից:

6. *Կարդացե՛ք ստորև տրված տեքստը և կատարե՛ք 6.1. – 6.4. առաջադրանքները:*

ԱՌԱԿ ՆԵՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աշակերտը դիմեց ուսուցչին.

- Դուք այնքան իմաստուն եք, միշտ լավ տրամադրություն ունեք, երբեք չեք բարկանում... Օգնեք ինձ, որ ես էլ այդպիսին դառնամ:

Ուսուցիչը համաձայնեց և խնդրեց, որ աշակերտը դպրոց բերի մի կարտոֆիլ ու պոլիէթիլենային թափանցիկ մի տոպրակ:

- Երբ դու բարկանաս ինչ-որ մեկի վրա ու նեղանաս նրանից, վերցրու կարտոֆիլը, վրան գրիր այն մարդու անունը, ումից նեղացել ես, ու դիր տոպրակի մեջ:

- Եվ վե՞րջ, - հիասթափված հարցրեց աշակերտը:

- Ոչ, - պատասխանեց ուսուցիչը, - կարտոֆիլով տոպրակը դու պետք է պահես քեզ մոտ, կրես այն ամենուր և ամեն անգամ, երբ էլի ինչ-որ մեկը նեղացնի քեզ, պիտի ավելացնես մեկ կարտոֆիլ՝ դրա վրա գրելով քեզ նեղացնողի անունը:

Աշակերտը համաձայնեց: Անցավ որոշ ժամանակ: Աշակերտի տոպրակը լցվեց կարտոֆիլներով և շատ ծանրացավ: Բացի դրանից, առաջին կարտոֆիլները սկսեցին փչանալ և ահավոր հոտ տարածել:

Այդ ժամանակ աշակերտը եկավ ուսուցչի մոտ ու ասաց.

– Սա արդեն անտանելի է, նախ՝ տոպրակը շատ է ծանրացել, հետո՝ կարտոֆիլները փչացել են: Մի ուրիշ բան առաջարկեք:

Ուսուցիչն ասաց.

– Լսիր, նույն բանը քեզ հետ է կատարվում, ուղղակի դու դա միանգամից չես նկատում: Ես քեզ դրան կողքից նայելու և հասկանալու հնարավորություն տվեցի: Ամեն անգամ, երբ կորոշես նեղանալ որևէ մեկից կամ, հակառակը, նեղացնել ինչ-որ մեկին, մտածիր՝ արդյոք քեզ պե՞տք է այդ բեռը:

Ծանոթացե՛ք 6.1. – 6.2. առաջադրանքների պայմաններին և յուրաքանչյուր հարցի հնարավոր պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը ճիշտ է՝ ըստ բերված տեքստի:

(1) **6.1.** *Ստորև թվարկվածներից ո՞րն է ճիշտ.*

Աշակերտը դիմեց ուսուցչին, որպեսզի.

ա) հավաստիացներ ուսուցչին, որ ստեղծված իրավիճակում ինքն իրավացի է,

բ) ցույց տար ուսուցչի նկատմամբ իր բարյացակամ վերաբերմունքը,

գ) ուսուցիչը խրախուսելու համար ուրիշների ներկայությամբ գովեր իրեն,

դ) ուսուցչի օգնությամբ լուծեր շրջապատի հետ ունեցած խնդիրները:

(1) **6.2.** *Ըստ բերված տեքստի՝ ուսուցիչը ցանկանում էր.*

ա) աշակերտին զերծ պահել բոլոր տեսակի սխալներից,

բ) աշակերտին մշտապես իր վերահսկողության տակ պահել,

գ) աշակերտին սեփական վարքը կառավարել սովորեցնել,

դ) իր վարքով օրինակ լինել աշակերտի համար:

Ուշադիր կարդացեք 6.3. – 6.4. առաջադրանքների պայմանները: Հստակ, պարզ ու հիմնավորված ներկայացրե՛ք Ձեր կարծիքը, բերե՛ք համապատասխան օրինակներ: Դատողությունը գրական լեզվի տեսակետից և տրամաբանորեն ճիշտ պետք է ձևակերպված լինի:

(2) 6.3. **«Դուք այնքան իմաստուն եք»...** Դատողություն արեք՝ ինչի՞ մեջ է տեսնում աշակերտն ուսուցչի իմաստնությունը:

(2) 6.4. **«Ամեն անգամ, երբ կորոշես նեղանալ որևէ մեկից կամ, հակառակը, նեղացնել ինչ-որ մեկին, մտածիր՝ արդյոք քեզ պե՞տք է այդ բեռը»**... Դատողություն արեք՝ ինչո՞ւ է ուսուցիչը նեղացկոտությունը ավելորդ բեռ համարում, և ընդհանրապես ինչպիսի՞ն է նրա մանկավարժական դիրքորոշումը:

7. *Կարդացե՛ք Վիկտոր Հովսեփյանի «Պապս» բանաստեղծությունը և կատարե՛ք 7.1. – 7.2. առաջադրանքները.*

Այո՞, թե՞ ոչ, հիսուն տարի, չէ՛, կես դար
Պապս անխոնջ խոհարար է, խոհարար,
Խոհարար է նա և ոչ թե թագավոր,
Թագ էլ որ տան, չէ՛, չի դառնա թագավոր:
Գոգնոց կապում, առնում դանակ ու հեսան,
Ճաշ է եփում իննսունինը տեսակ,
Հարսանիք կա, ճաշեր պիտի եփի նա՝
Հագած խալաթ, դրած ճերմակ կեպի նա:

- Փչի զուռնա՛... - Նվագն առավ տուն ու դուռ,
Պարում է նա՝ ձեռքերին թաս ու շամփուր:
Պարում է նա առույգ, որպես պարող բոց,
Հետն էլ երգում. «Աստված ձեզ տա սիրած գործ»:
Նա լուսո դեմ հարսանիքից տուն կգա,
Երբ ես զարթնեմ, բարձիս երեք խնձոր կա,
Երեք խնձոր, երեքն էլ թող լինեն ձեզ,
Ես իմ սիրած գործն եմ ուզում պապիս պես:

(2) 7.1. *Դիտարկե՛ք բերված համեմատությունը՝ «պարում է նա առույգ, որպես պարող բոց», և չափազանցությունները՝ «ճաշ է եփում իննսունինը տեսակ», «նվագն առավ տուն ու դուռ»: Ընտրե՛ք դրանցից մեկը, բացատրե՛ք և դատողություն արեք՝ գեղարվեստական ի՞նչ գործառույթ ունի այն բանաստեղծության մեջ:*

(2) 7.2. *Դատողություն արեք բանաստեղծի գլխավոր ասելիքի շուրջ, ընդհանրացրե՛ք բանաստեղծության մեջ ներկայացված գաղափարը:*

Մաթեմատիկա

(1) **8.** Ավտոբուսում մի քանի ուղևոր էր: Առաջին կանգառից հետո ուղևորների թիվը կրկնապատկվեց, երկրորդ կանգառից հետո՝ նվազեց 5-ով, երրորդ կանգառից հետո՝ կրկին կրկնապատկվեց, իսկ չորրորդ կանգառից հետո՝ նվազեց 6-ով: Դրանից հետո ավտոբուսում ուղևոր չմնաց: Քանի՞ ուղևոր էր ավտոբուսում ի սկզբանե:

ա) 4

բ) 5

գ) 6

դ) 7

(1) **9.** Դիցուք B նշանակում է 12-ի բաժանարարների բազմությունը, C – 24-ի բաժանարարների բազմությունը, իսկ $B \cup C$ – այս բազմությունների միավորումը: Քանի՞ անդամից է բաղկացած $B \cup C$:

ա) 8

բ) 10

գ) 12

դ) 14

(1) **10.** A կետը $B(4;\ -3)$ կետի համաչափությունն է x-առանցքի նկատմամբ, իսկ C կետը A կետի համաչափությունն է y-առանցքի նկատմամբ: Ինչի՞ է հավասար C կետի կոորդինատների գումարը:

ա) (-2)-ի,

բ) (-1)-ի,

գ) 2-ի,

դ) 1-ի:

(1) **11.** m այնպիսի բնական թիվ է, որը 6-ի բազմապատիկն է, իսկ n այնպիսի զույգ բնական թիվ է, որը 3-ի բազմապատիկը **չէ**: Թվարկածներից ո՞ր արտահայտության արժեքն է 6-ի բազմապատիկը:

ա) $2(m+n)+3(4m+n)$

բ) $(4m+3n)+2(3m+4n)$

գ) $6(3m+n)+5(2m+n)$

դ) $3(4m+n)+2(m+3n)$

(1) **12.** Ունենք միայն մեկական 3, 5, 7-կիլոգրամանոց կշռաքարեր: Ստորև թվարկածներից քանի՞ կիլոգրամանոց առարկա կշռել **չենք կարողանա** նժարներ ունեցող կշեռքի վրա միայն այս կշռաքարերը կիրառելով:

ա) 1

բ) 2

գ) 6

դ) 9

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **13.** Տրված երեք թվերից առաջին թիվը հավասար է երկրորդ թվի $\frac{1}{3}$ մասին, իսկ երկրորդ թիվը՝ երրորդ թվի $\frac{1}{2}$ մասին:

Այս թվերի գումարի ո՞ր մասն է կազմում երրորդ թիվը:

ա) $\frac{2}{3}$

բ) $\frac{3}{4}$

գ) $\frac{3}{5}$

դ) $\frac{4}{5}$

Տվյալների վերլուծում

Դիագրամի վրա տրված է, թե ինչ քանակի ջուր էր ներհոսում ջրամբարում և ինչ քանակի ջուր էր մատակարարվում սպառողներին այս ջրամբարից ամեն օր, մայիսի 12-ից մայիսի 18-ը ներառյալ:



Հաջորդ երկու հարցերին պատասխանեք այս դիագրամի համաձայն:

Անցնել հարցերին. 14 15

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **14.** Թվարկածներից, ո՞ր օրը տեղի ունեցավ այն, որ նախորդ օրվա համեմատությամբ նվազեց ինչպես ջրամբարում ներհոսած ջրի քանակը, այնպես էլ սպառողներին մատակարարված ջրի քանակը:

ա) 16 մայիսին,

բ) 15 մայիսին,

գ) 14 մայիսին,

դ) 13 մայիսին:

Տեսնել դիագրամը

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **15**. Քանի՞ հազար մ^3 ջուր կար ջրամբարում մայիսի 13-ի օրվա վերջին, եթե մայիսի 12-ի օրվա վերջին ջրի քանակը հավասար էր 16 հազար մ^3-ի:

ա) 11

բ) 12

գ) 13

դ) 14

Տեսնել դիագրամը

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **16.** Թեան, Լիկան, Իան և Սալոմեն քույրեր են:

Տրված է երկու դրույթ.

I. Քույրերից գոնե մեկը եղել է արտասահմանում:
II. Քույրերից գոնե մեկը չի եղել արտասահմանում:.

Ստորև թվարկածներից ո՞րն է **<u>անհնար:</u>**

ա) Առաջին դրույթը ճշմարիտ է, իսկ երկրորդը՝ կեղծ,
բ) առաջին դրույթը կեղծ է, իսկ երկրորդը՝ ճշմարիտ,
գ) երկու դրույթներն էլ ճշմարիտ են,
դ) երկու դրույթներն էլ կեղծ են:

(1) **17.** Եթե x մեծ է y-ից 2-անգամ, ապա $(7x-4y)$ մեծ է $(3x-y)$-ից.

ա) 2-անգամ,

բ) 3-անգամ,

գ) 4-անգամ,

դ) 5-անգամ:

(1) **18.** Խորանարդի ծավալն է 8 սմ^3: Այս խորանարդի մակերևույթի մակերեսն է.

ա) 18 սմ^2,

բ) 24 սմ^2,

գ) 30 սմ^2,

դ) 36 սմ^2:

(1) **19.** Զբոսաշրջիկը տեղաշարժվում էր 3 ժամվա ընթացքում: Առաջին ժամում նա անցավ անցնելիք ճանապարհի մեկ երրորդը, երկրորդ ժամվա ընթացքում՝ ճանապարհի քառորդ մասը, իսկ երրորդ ժամվա ընթացքում՝ մնացած 5 կմ: Թվարկածներից ո՞ր արտահայտությունն է ցույց տալիս, թե քանի՞ կիլոմետր անցավ զբոսաշրջիկը:

ա) $5 + 1 : \left(\frac{1}{3} + \frac{1}{4}\right)$

բ) $5 + 1 : \left(\frac{1}{3} - \frac{1}{4}\right)$

գ) $5 : \left(1 - \frac{1}{3} - \frac{1}{4}\right)$

դ) $\frac{1}{3} + \frac{1}{4} + 5$

(3) **20.** Բաժնետիրական ընկերության երեք սեփականատեր բաժնետոմսերի վաճառքի արդյունքում ստացած գումարը համապատասխանաբար 4: 5: 1 հարաբերությամբ բաշխեցին: Եթե նույն գումարը ընկերության սեփականատերերը համապատասխանաբար 2: 2: 1 հարաբերությամբ բաշխեին, ապա նրանցից մեկին 400 լարիով ավելի կհասներ: Ընդամենը քանի՞ լարի էր կազմում բաժնետոմսերի վաճառքի արդյունքում ստացված գումարը:

Պատասխանը հիմնավորե՛ք:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(3) **21.** Աշակերտներին առաջարկեցին հետևյալ աշխատանքը.

1) Գրառեք. I. Քանի՞ միլիմետր է 20 սմ և 8 մմ,

II. Քանի՞ կիլոգրամ է 40 տ և 60 կգ,

III. Քանի՞ վայրկյան է 5 րոպեն և 10 վրկ.:

2) Հաշվարկեք. I. $57 + 22 + 8$ II. $86 - 28 - 8$

3) Մտապահե՛ք որևէ թիվ: Եթե այդ թվին ավելացնենք 28, իսկ այնուհետև նվազեցնենք 84, կստանանք 120: Ի՞նչ թիվ էիք մտապահել:

4) Նիկան խեցիների թվաքանակի կեսը և ևս մեկ խեցի տվեց Էլենեին, իսկ մնացած 5 խեցին՝ Էրեկլեին: Ընդամենը քանի՞ խեցի ուներ Նիկան:

5) Ուղղանկյունը բաժանված է 3 քառակուսիների այնպես, ինչպես դա տրված է գծագրի վրա: Բաժանման արդյունքում ստացված յուրաքանչյուր փոքր քառակուսու պարագիծը 8 սմ է: Ինչի՞ է հավասար ամբողջական ուղղանկյան պարագիծը:



Հաջորդ էջին տրված է աշակերտներից մեկի աշխատանքը.

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

1) I. 208 մմ II. 4060 կգ III. 510 վրկ.

2) I. $57 + 22 + 8 = 57 + (22 + 8) = 57 + 30 = 87$

II. $86 - 28 - 8 = 86 - (28 - 8) = 86 - 20 = 66$

3) $84 - 28 = 56$, $120 - 56 = 64$. Մտապահել էիք 64:

4) Նիկան ուներ $2 \cdot (5 - 1) = 8$ խեցի:

5) $8 : 4 = 2$ սմ, երկարությամբ 3 փոքր քառակուսի կտեղավորվի, լայնությամբ՝ 2 փոքր քառակուսի, պարագիծն է $2 \cdot (3 + 2) = 10$ սմ

- Մատնացույց արեք աշակերտի կողմից թույլ տրված յուրաքանչյուր սխալը և գրեք ուղղված տեսքով:

Բնագիտություն

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **22.** Ի՞նչ ընդհանուր հատկություն ունեն նկարում պատկերված կենդանիները:

ա) Զվով բազմանալու ունակություն,

բ) տեղաշարժվելու միջոց,

գ) տարածվելու տիրույթ,

դ) եղջերային ծածկույթ:

(1) **23.** Ո՞ր լատինական տառով են նշված քամու միջոցով փոշոտվող ծաղիկները:



ա) B և D,

բ) C և D,

գ) B և C,

դ) A և C:

(1) **24.** Ո՞ր լատինական տառով է նշված ձևափոխված ցողունը:



ա) A և B,

բ) A և C,

գ) B և C,

դ) B և D:

(1) **25.** Հիվանդությունների հարուցիչի փոխանցող է.

ա) մոծակը,

բ) լվիճը,

գ) իշախառանչը,

դ) մորեխը:

(1) **26**. Բարդ կենսական ցիկլ (բոլորաշրջան) ունի.

I. կրիան II. մորեխը III. հավը IV. գորտը

ա) I և II,

բ) I և III,

գ) II և III,

դ) II և IV:

(1) **27.** Կաթսայի մեջ լցրեցին տաք ջուր և փակեցին թափանցիկ կափարիչով: Շուտով կափարիչի վրա ներսից հայտնվեցին ջրի կաթիլներ: Ո՞ր երևույթը (երևույթները) առաջացրին կաթիլների հայտնվելը:



ա) Միայն կոնդենսացիան,

բ) միայն գոլորշացումը,

գ) գոլորշացումը և կոնդենսացիան,

դ) գոլորշացումը և դիֆուզիան,

(1) **28.** Դպրոցի կողմը տանող ճանապարհին աշակերտը հիշեց, որ տանն է մնացել տետրը: Նա ետ դարձավ և հետո կրկին գնաց դեպի դպրոց: Ստորև թվարկածներից ո՞ր գրաֆիկը կարող է արտացոլել աշակերտի տնից x հեռավորության կախվածությունը t ժամանակից մինչև դպրոց գալու մոմենտը:



I



II

ա) Միայն I,

բ) Միայն II,

գ) Ոչ մեկը,

դ) Երկուսն էլ:

(1) **29.** Ո՞ր լուսանկարում է պատկերված օդերևութաբան:



1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **30.** Համաձայն քարտեզի հատվածի՝ ո՞ր դատողությունն է ճիշտ:



Մասշտաբ 1:10 000

ա) 1-ին և 2-րդ հողամասերը գտնվում են գետի աջ ափին:
բ) Անտառը գտնվում է ջրհորից դեպի հյուսիս:
գ) Ցիվի գետի ձախ ափի երկայնքով ձգվում է ձոր:
դ) Քարտեզի վրա նշված է խառը անտառի ծառուտ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **31.** Քարտեզի վրա տրված են չորս տարբեր նավերի գտնվելու վայրերը: Դրանցից ո՞րը կարող է շարժվել այն երթուղով, որով հնարավոր է մտնել Սև ծով ամենակարճ ճանապարհով:

ა) 1
ბ) 2
გ) 3
დ) 4

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **32.** Քարտեզի վրա նշված տեղանքներից որտե՞ղ է ապրում լուսանկարում պատկերված կենդանին:



ა) 1
ბ) 2
გ) 3
დ) 4

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **33.** Ո՞ր լուսանկարում է պատկերված անթրոպոգեն լանդշաֆտը։



Ակադեմիական հմտություններ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

Ընթերցած տեքստի վերաիմաստավորում

Ուշադրությամբ ընթերցե՛ք և իմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը ճիշտ է՝ տրված տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, դրան պատասխանելու համար, հնարավոր է հարկ լինի վերադառնալ տեքստին, համապատասխան հատվածը նորից ընթերցել և կրկին անցնել հարցին: Դա կհեշտացնի ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմումը»:

I Կրթության բնագավառում անհավասարությունը ենթադրում է այն տարբերությունները, որոնք գոյություն ունեն տարբեր խմբերի միջև կրթական կարողությունների, ռեսուրսների և, համապատասխանաբար արդյունքների առումով: Անհավասարությունը կարող է դրսևորվել տարբեր ուղղություններով, ինչը կախված է տնտեսական, սոցիալական, գենդերային, էթնիկական կամ այլ գործոններից: Օրինակ՝ ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաները հաճախ ավելի քիչ հնարավորություններ ունեն կրթության համար, դրանք են՝ լավ դպրոցներ, ուսուցիչներ, տեխնոլոգիաներ և լրացուցիչ կրթական ռեսուրսներ ստանալու հասանելիությունը: Այդ պատճառով նրանք կարող են դժվարանալ հաջողության հասնել: Նույնպես որոշ մշակույթներում աղջիկները կրթություն ստանալու սահմանափակ հնարավորություններ ունեն, ինչը պայմանավորում են հասարակության մեջ կանանց դերի վերաբերյալ պահպանողական սպասումները և կարծրատիպային համոզմունքները:

II Կրթական անհավասարությունը ուղղակիորեն կապված է մարդկային կապիտալի ցուցչի հետ: Այս վերջինը այն ցուցանիշն է, որն արտացոլում է երկրի բնակչության կրթության և առողջական վիճակի որակի գնահատականը: Եթե երկրի բնակչությունը ստանում է որակյալ կրթություն և առողջապահական ծառայություններ, ապա նրա «մարդկային կապիտալը» բարձր է, ինչը նշանակում է, որ այդ երկրի քաղաքացիներն ունեն լավ պայմաններ իրենց կարողությունները՝ ներուժը իրացնելու համար, ինչը, համապատասխանաբար, պայմանավորում է երկրի տնտեսության հզորությունը:

III Կա՛ համոզմունք, որ եթե բավականաչափ աշխատես, անպայման կհասնես քո բոլոր նպատակներին: Նվաճումը հմտությունների, մոտիվացիայի և քրտնաջան աշխատանքի արդյունք է, և համապատասխանաբար՝ անկախ է սոցիալական ծագումից: Սակայն ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցող ընտանիքների երեխաները հաճախ չեն կարողանում իրացնել իրենց կարողությունները անհավասար պայմանների պատճառով: Ցածր եկամուտ ունեցող ընտանիքները հաճախ չեն կարողանում մեծ ներդրում կատարել իրենց երեխաների կրթության մեջ, ինչը պայմանավորում է ցածրորակ կրթություն և, հետևաբար, աշխատաշուկայում այս աշակերտների ցածր հնարավորություններ: Սա ստեղծում է անհավասարություն, որը փակ շղթայի մեջ է դնում սոցիալ-տնտեսական առումով անապահով խմբերին, քանի որ նրանք բարձր կրթական մակարդակ ունենալու ավելի քիչ հավանականություն՝ շանս ունեն:

Անցնել հարցերին. 34 35 36 37 38

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

IV Կրթական անհավասարության խնդրով հետաքրքրված ֆրանսիացի հետազոտող Սեբաստիան Գուդոն ուշադրությունը կենտրոնացրեց մեկ այլ տեսակետի վրա: Նրա հետազոտության արդյունքների համաձայն՝ անհավասարությունը սկսվում է վաղ տարիքից: Սոցիալական խավը ազդեցություն է գործում այն բանի վրա, թե ինչ լումա է ներդնում երեխան դասի ընթացքում, ինչպես նաև այն բանի վրա, թե ինչպես են երեխաները գնահատում իրենց անձը և ուրիշներին: Պարզվել է, որ ցածր սոցիալական խավի ընտանիքների երեխաները ավելի քիչ են մասնակցում խմբային քննարկումներին, քան բարձր սոցիալական խավի իրենց հասակակիցները: Կարևոր է, որ այս իրավիճակը չբացատրվի երեխաների միջև լեզվական կարողությունների կամ ինքնարտահայտման պակասով: Այն նորմերը, որոնք ցածր սոցիալական խավի ընտանիքներում սովորական են, հակասում են այն նորմերին, որոնք տարածված են դպրոցում: Նրանց ինքնարտահայտման ձևերը և մշակութային փորձառությունները թերագնահատվում են դասարանում: Երեխաները համեմատում են իրենց անձը ուրիշների հետ, հայտնաբերում են տարբերություններ, տան և դպրոցի միջև մշակութային անհամապատասխանություններ և իրենց նկատմամբ բացասական սպասումներ, ինչը ուժեղացնում է ուրիշների կողմից քննադատվելու վախը և, հետևաբար, նրանք խուսափում են ինքնադրսևորումից:

V Կրթության վաղ շրջանում ստեղծված անհավասար ուսումնական միջավայրը կրթական ողջ կարիերայի ընթացքում առաջադիմության տարբերությունների նշանակալից հիմքերից մեկն են:

Անցնել հարցերին. 34 35 36 37 38

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **34.** Կրթության մեջ անհավասարության ո՞ր երկու պատճառներն են պատկերված առաջին պարբերությունում բերված օրինակներով:

ա) Տնտեսական և էթնիկական,
բ) էթնիկական և գենդերային,
գ) սոցիալական և էթնիկական,
դ) տնտեսական և գենդերային:

Վերադարձ տեքստի I էջին
Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **35.** Թվարկածներից ո՞րն է ճիշտ ներկայացնում կրթական անհավասարության և մարդկային կապիտալի ցուցչի միջև եղած կապը:

ա) Բարձր եկամուտ ունեցող երկրները միանշանակ ունեն հասանելի կրթություն և մարդկային կապիտալի բարձր ցուցիչ:

բ) Եթե երկիրն ունի մարդկային կապիտալի բարձր ցուցիչ, դա նշանակում է, որ այդ երկրում չկա որևէ մարդ, որը ստացել է ցածրորակ կրթություն:

գ) Եթե մարդիկ կրթություն ստանալիս ունեն տարբեր պայմաններ, նրանց կարողությունները պակաս զարգացած կլինեն, և, համապատասխանաբար, երկրում կտուժի մարդկային կապիտալը:

դ) Մարդկանց ցածրորակ կրթությունը պայմանավորված է աղքատությամբ, չնայած հնարավոր է այդ պատճառը փոխհատուցել որակյալ առողջապահությամբ, հետևաբար, մարդկային կապիտալը չի տուժի:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **36.** Տեքստի երրորդ պարբերությունում կարդում ենք. «Նվաճումը հմտությունների, մոտիվացիայի և քրտնաջան աշխատանքի արդյունք է»: Թվարկածներից ո՞րն է **կասկածի տակ դնում** այդ կարծիքը:

ա) Աշակերտների մեծ մասը, ում մայրենի լեզուն չի համընկնում դպրոցում ուսուցման լեզվին, չունեն բարձր ակադեմիական առաջադիմություն:

բ) Այն աշակերտները, ովքեր սիստեմատիկաբար բացակայում են դպրոցից, չեն կարողանում հասնել ակադեմիական հաջողությունների:

գ) Աշակերտները, ովքեր չունեն համակարգված կերպով առաջադրանքները կատարելու սովորություն, չեն կարողանում հասնել ակադեմիական հաջողությունների:

դ) Աշակերտների մեծ մասը, ովքեր չունեն համբերատար լինելու պատշաճ զարգացած ունակություն, չեն հասնում ակադեմիական հաջողությունների:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **37.** Թվարկածներից ո՞րն է տեքստի չորրորդ պարբերությունում նկարագրված հետազոտության արդյունքների վրա հիմնված արդարացի եզրակացությունը:

ա) Երեխաների լեզվական կարողությունների և ինքնարտահայտման հմտությունների համաձայն՝ երեխաների միջև գոյություն ունեցող տարբերությունները պայմանավորում են նրանց ներգրավվածությունը ուսումնական ակտիվություններում, ինչը, համապատասխանաբար պատնեշ է ստեղծում կրթության հասանելիության համար:

բ) Սեփական տարբերակվածության ընկալումը և ուսումնական միջավայրում աջակցության պակասը բացասաբար են անդրադառնում երեխաների ինքնագնահատման վրա, ինչը պատնեշ է հանդիսանում նրանց կարողության իրացման համար:

գ) Երեխաների միջև տարբերությունները, սոցիալական դասի համաձայն, բացատրվում է նրանց մշակութային փորձառությունների տարբերություններով, ինչը անհավասար ուսումնական միջավայր է ստեղծում:

դ) Ուսումնական միջավայրին հարմարվելու համար երեխաների ինքնագնահատումը չի կարող պատնեշ լինել: Անհավասար կրթական միջավայրը դպրոցում բոլոր երեխաների համար ստեղծում է միատեսակ նորմեր:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(1) **38.** Թվարկածներից ո՞րը **<u>չի հանդիսանում</u>** տվյալ տեքստի նպատակը:

ա) Մեզ ծանոթացնել կրթական անհավասարության տարբեր պատճառներին:
ճ) Ընդգծել կրթության մեջ անհավասարության և երկրի տնտեսական հզորության միջև կապի կարևորությունը:
գ) Ժամանակակից հետազոտությունների արդյունքների հիման վրա ցույց տալ կրթական անհավասարությունը վերացնելու ուղիները:
ք) Բացատրել, թե ինչպե՞ս և ի՞նչ ձևով է այս կամ այն գործոնը ազդում կրթական անհավասարության վրա:

Վերադարձ տեքստի I էջին
Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26
27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39

(9) **39. Վերլուծական էսսե**

Ուշադրությամբ ծանոթացե՛ք առաջադրանքում տրված երկու փոխհակասական դրույթներին: Կատարե՛ք ընտրություն դրանցից որևէ մեկի օգտին: Բերե՛ք փաստարկներ ձեր ընտրությունը հիմնավորելու համար, և քննադատորեն գնահատե՛ք հակասական դրույթը:

ա) Ծնողները ակտիվորեն պետք է ներգրավված լինեն դպրոցական կյանքին, որպեսզի օժանդակեն երեխայի զարգացման գործընթացին և ուսանել-ուսուցանելու որակի բարելավմանը:

բ) Ծնողի միջամտությունը դպրոցական գործընթացներին սահմանափակում է մանկավարժի ինքնավարությունը և խանգարում երեխայի անկախության ձևավորմանը:

Գրվածքը պետք է պարունակի առնվազն 120 բառ: